ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/36

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.04.2018թ. թիվ 03/26-3/6293-18 գրությամբ «Էքսպերտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00891545) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.03.2018թ. թիվ 01/61-7339 գրության հիման վրա, 06.04.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 30.03.2018թ. թիվ 01/61-7339 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Էքսպերտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն): Ընկերությունը հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ 22.03.2018թ. ծանուցում է ուղարկվել Ընկերությանը՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էկլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Արծրուն Վարդանյանը:

3. <u>«Էքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էքսպերտ» ՍՊԸ-ն 18.04.2018թ. Խորհրդին ուղղված թիվ 03-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.04.2018թ. նախաձեռնած «Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգը:

Հայտնում եմ, որ նշված պաշտոնական ընթացակարգը նախաձեռնվել է որակավորման փաստաթղթերի պահանջը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը չներկայացելու պատճառով:

Որակավորման փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառաբանությունը շարադրում եմ ստորև:

«Էքսպերտ» ՍՊԸ-ն մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կանոնավոր կերպով ստուգել է իր էլեկտրոնային փոստի հասցեն, սահմանված ժամկետում սպասվելիք բոլոր ավտոմատ և ոչ ավտոմատ ծանուցումներն ուսումնասիրելու և դրանց պատասխանելու համար: Սահմանված ժամկետը լրանալուց հետո Ընկերության էլեկտրոնային փոստի ուսումնասիրությունից պարզվել է, որ Պատվիրատուի՝ որակավորման փաստաթղթերի ներկայացման պահանջ պարունակող ոչ ավտոմատ ծանուցումը հայտնվել է էլեկտրոնային փոստի «սպամ» արկղում:

Նշված հանգամանքն է հանդիսացել է այն պատճառը, որ Ընկերությունը ժամանակին չի տեղեկացել որակավորման փաստաթղթերի ներկայացնելու մասին Երևանի քաղաքապետարանի կողմից ուղարկված ոչ ավտոմատ ծանուցմանը:

Հայտնում եմ նաև, որ ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին վերաբերվող բոլոր ծանուցումները Ընկերությունը ստացել է իր էլեկտրոնային փոստի նամակների ստացման հիմնական արկղում (inbox), բացի որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ պարունակող ոչ ավտոմատ ծանուցումից, որն անկախ Ընկերության կանխատեսումից հայտնվել էր «սպամ» արկղում:

Բացի այդ, Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ թեև էլեկտրոնային փոստի «սպամ» արկղում Ընկերությունը ստացել է վերը նշված ծանուցումը՝ info@armeps.am հասցեից, սակայն դրա վերնագիրը (subject) չի պարունակել

որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում: Ավելին, ծանուցման մեջ նշված են եղել «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» բառերը, ինչից ելնելով էլ չենք անդրադառնել նշված ծանուցման բովանդակությանը:

Այսպիսով, թեև նշված ծանուցումը գնտվել է Ընկերության էլեկտրոնային փոստի «սպամ» արկղում, այնուամենայնիվ նման պայմաններում Ընկերությունը հնարավորություն չի ունեցել info@armeps.am էլեկտրոնային հասցեից ստացված բազմաթիվ ծանուցումների թվից տարբերել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ծանուցումը որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Խնդրում ենք հաշվի առնել վերը նշված հանգամանքները, մեր ընկերության՝ մրցույթի հաղթողի իրավունքից զրկվելու հանգամանքը, և «Էքսպերտ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Էքսպերտ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արմեն Սարգսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/36 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.04.2018թ. թիվ 03/26-3/6293-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.03.2018թ. թիվ 01/61-7339 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 և 29.03.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 արձանագրությունները, «Էքսպերտ» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 18.04.2018թ. թիվ 03-18 գրությունը, Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկված էլեկտրոնային նամակի պատճենը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող շարժական և անշարժ գույքի շուկայական գնահատման և հաշվետվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Էքսպերտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն):

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 20.03.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ Ընկերությանը ճանաչել է Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստթղթերը:

Հանձնաժողովը 29.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Էքսպերտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի, 45-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը նույն կետով որոշել է «Էքսպերտ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 10.04.2018թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց «Էքսպերտ» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 18.04.2018թ. թիվ 03-18 գրությամբ ներկայացված կարծիքը և հայտնեց, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու վերաբերյալ Հանձնաժողովի համապատասխան արձանագրությունն ստանալուց որոշ ժամանակ հետո ստացել է հեռախոսազանգ Պատվիրատուից, ինչից հետո Ընկերության էլեկտրոնային փոստի ուսումնասիրությունից պարզվել է, որ Պատվիրատուի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ պարունակող ոչ ավտոմատ ծանուցումը հայտնվել է Ընկերության էլեկտրոնային փոստի «սպամ» արկղում: Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչը Խորհրդի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ թեև info@armeps.am հասցեից ուղարկված՝ նշված ծանուցումը հայտնվել է Ընկերության էլեկտրոնային փոստի «սպամ» արկղում, սակայն եթե անգամ այն ստացվեր էլեկտրոնային փոստի հիմնական (inbox) արկղում, ապա info@armeps.am էլեկտրոնային հասցեից ստացված բազմաթիվ ծանուցումների թվից գրեթե անհնար կլիներ տարբերել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցումը, քանի որ դրա վերնագիրը (subject) չէր պարունակել որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում: Ընդ որում, ծանուցման մեջ նշված են եղել «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» բառերը, այդ իսկ պատճառով էլ Ընկերությունը չի անդրադարձել նշված ծանուցման բովանդակությանը:

Պատվիրատուի ներկայացուցիչն իր հերթին հայտնեց, որ նշված ծանուցումը սահմանված ժամկետում Հանձնաժողովի կողմից ուղարկվել է Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին, միաժամանակ ընդունելով, որ ոչ ավտոմատ ծանուցման

վերնագիրը չի պարունակել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ներկայացնելու պահանջին վերաբերող որևէ նշում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ, բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած

մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ուղարկված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջով ոչ ավտոմատ ծանուցումը հայտնվել է Ընկերության էլեկտրոնային փոստի «սպամ» թղթապանակում, ընդ որում, նշված ծանուցման վերնագիրը չի պարունակել հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ վերը նշված ծանուցմանը կցված էլեկտրոնային փաստաթուղթը պարունակում է «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» նշմամբ:

Խորհուրդը գտնում է, որ նշված պայմաններում «Էքսպերտ» ՍՊԸ-ն ըստ էության հնարավորություն չի ունեցել info@armeps.am էլեկտրոնային հասցեից ստացված ծանուցումների թվից տարբերել Հանձնաժողովի՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը: Խորհուրդը գտնում է նաև, որ «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» նշումը կարող էր թյուրիմացաբար ընկալվել մասնակցի կողմից, քանի որ հիշյալ ծանուցումը ինքնին ակնկալում է սահմանված ժամկետում մասնակցի կողմից պատասխան՝ հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստթղթերի ներկայացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, «Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.04.2018թ. «Էքսպերտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00891545) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ